

**«Գրադարանների նորարար առցանց ծառայությունները XXI դարի գրադարանավարների համար»**

Հայաստանի ազգային գրադարանի մի խումբ աշխատակիցներ 2017թ. նոյեմբերի 27-ից մինչև դեկտեմբերի 6-ը մասնակցել են Վալերի Բոյուսովի անվան Երևանի լեզվահասարակագիտական համալսարանի գրադարանում տեղի ունեցած «Գրադարանների նորարար առցանց ծառայությունները XXI դարի գրադարանավարների համար» խորագրով գրադարանավարների մասնագիտական վերապատրաստման դասընթացներին:

Ապրիլի 5-ին Հայաստանի ազգային գրադարանի նիստերի սրահում դասընթացի վերաբերյալ մանրամասներ հաղորդեցին Անձեռնմխելի գրականության բաժնի աշխատակիցներ Արմինե Մկրտչյանը և Ասպրամ Աշուղյանը:

- XXI դարի գրադարանների մարտահրավերները (Արմինե Մկրտչյան)
- Գրադարանների վեբ 2.0 տեխնոլոգիաներ և սոցիալ մեդիա հարթակներ /սոցիալական ցանցեր/, /մասնագիտական հարթակներ/ (Ասպրամ Աշուղյան)

